ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Ջրվեժի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման նպատակով կազմակերպված «ԿՄՋՀ-ԾՁԲ-19/15» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի հունիսի 15-ին կնքած «ԿՄՋՀ-ԾՁԲ-19/15» պայմանագրում 2019 թվականի դեկտեմբերի 16-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ: Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն կողմերից անկախ պատճառներով:

Փոփոխության նկարագրություն: Շինարարական աշխատանքների պայամանագրի լուծարում:

Փոփոխության հիմնավորում: Պայմանագրի 7.5 կետ և շինարարական աշխատանքների միակողմանի լուծարում:

Պատվիրատու՝ Ջրվեժի համայնքապետարան:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳՆՄԱՆ ԿՄՋՀ-ԾՁԲ-19/15 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

Ջրվեժ « 16 » «դեկտեմբերի» 2019 թ.

Ջրվեժի համայնքապետարանն, ի դեմս Ռ.Պետրոսյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Թերմոշինթել» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Գրիգորյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով 2019 թվականի հունիսի 15-ին կնքված «Ջրվեժ համայնքի կարիքների համար շինարարական աշխատանքների ընթացքում հեղինակային հսկողության ծառայությունների» կատարման «ԿՄՋՀ-ԾՁԲ-19/15» ծածկագրով պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 կետը և Զորաղբյուրի մանկապարտեզի ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքների ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-19/18.2 ծածկագրով պայամանագրի միակողմանի լուծարումը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև համաձայնագիր) հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

1.1 Հաշվի առնելով Զորաղբյուրի մանկապարտեզի ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքների ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-19/18.2 ծածկագրով պայամանագրի միակողմանի լուծարումը, երկկողմ համաձայնությամբ դադարեցնում են հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրի հետագա գործողությունը 2-րդ չափաբաժնի մասով:

2.Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը և գործում է մինչև Կողմերի միջև ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքները և պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարզոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները եվ ստորագրությունները

Պատվիրատու	Կատարող
Ջրվեժի համայնքապետարան	«Թերմոշինթել» ՍՊԸ
Կոտայքի մարզ, գ.Ջրվեժ	ք.Հրազդան, Միկրո 229/14
Աբովյանի ՏԳԲ	Հայբիզնեսբանկ
Հ/Հ 900102554160	Հ/Հ 1150008729339392
ՀՎՀՀ 03546091	ՀՎՀՀ 03017274
_____ (ստորագրություն)	_____ (ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ